Հ Ր Ա Մ Ա Ն N 74-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«07» ԱՊՐԻԼԻ 2014 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Ծառայողական քննություն նշանակելու և անցկացնելու կարգը հաստատելու մասին» թիվ ՔՀ-46-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին հասցեագրված Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վարչական շենքում (Արշակունյաց պողոտա 23) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Կենտրոն և Նոր Նորք բաժանմունքի պետ Տիգրան Պետրոսյանի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության հատուկ նշանակության բաժնի առաջին կարգի մասնագետ Ռոբերտ Թամարյանի և քաղաքացի Արման Գասպարյանի միջև տեղի ունեցած միջադեպի դրդապատճառներն ու հանգամանքները պարզելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում նշանակել ծառայողական քննություն:

2. Ծառայողական քննության անցկացման իրավասությունը վերապահել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչությանը, տեսչության պետ՝ Նորայր Փանոսյանի ղեկավարությամբ:

3. Ծառայողական քննության անցկացման աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետի տեղակալ Միքայել Մինասյանին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող և քրեակատարողական ծառայությունների օրինականության վերահսկողության բաժնի փորձագետներ՝ Աշոտ Ստեփանյանին, Լևոն Թումասյանին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ներքին անվտանգության բաժնի գլխավոր մասնագետ Հովհաննես Սարգսյանին:

4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ՝ Հ. Հարությունյանին.

ծառայողական քննության անցկացման ընթացքում աջակցել ծառայողական քննության աշխատանքներն իրականացնողներին անհրաժեշտ փաստաթղթերի և նյութերի տրամադրման հարցում:

5. Ծառայողական քննության ընթացքում դադարեցնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Կենտրոն և Նոր Նորք բաժանմունքի պետ Տիգրան Պետրոսյանի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության հատուկ նշանակության բաժնի առաջին կարգի մասնագետ Ռոբերտ Թամարյանի լիազորությունները:

6. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ՝ Նորայր Փանոսյանին.

ծառայողական քննության արդյունքների մասին 15 աշխատանքային օրվա ընթացքում զեկուցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ